ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2025 թվականի N 982-Ա

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ սահմանված կարգի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9.1-ին կետերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2025 թվականի ամառային զորակոչից տարկետում տալ կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող և բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված) կրթական ծրագրով սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիների՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2025 թվականի ամառային զորակոչից տարկետում տալ կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող և մագիստրատուրայի կրթական ծրագրով սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիների՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2025 թվականի ամառային զորակոչից տարկետում տալ կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող և ասպիրանտուրայի կրթական ծրագրով սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիների՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի 12-րդ ենթակետով Ալեքսանդր Միքայելի Վարդանյանի, 3-րդ կետի 2-րդ ենթակետով Դավիթ Վարթանի Մարդիրոսյանի, 5-րդ ենթակետով Ջորայր Ջարմայրի Բեկնազարյանի, 4-րդ կետի 3-րդ ենթակետով Արմեն Արթուրի Ավետիսյանի, 4-րդ ենթակետով Վարդգես Դավիթի Խոջասարյանի, 5-րդ ենթակետով Սարգիս Անդրեյի Գրիգորյանի, 7-րդ ենթակետով Միքայել Վահանի Ավետիսյանի, 8-րդ ենթակետով Պերճ Էմինի Խաչատրյանի, 10-րդ ենթակետով Դավիթ Հովսեփի Միրոյանի, 12-րդ ենթակետով Ժորես Վաչագանի Միտոյանի, 13-րդ ենթակետով Հրանտ Գուրգենի Հակոբյանի, 16-րդ ենթակետով Աշոտ Գևորգի Գիզիրյանի, 18-րդ ենթակետով Էդուարդ Դավիթի Երեմյանի, 19-րդ ենթակետով Գոռ Գևորգի Հասրաթյանի, 21-րդ ենթակետով Գրիգոր Գագիկի Աղաջանյանի, 24-րդ ենթակետով Միքայել Դավիթի Սարգսյանի, 25-րդ ենթակետով Ռոբերտ Գագիկի Սահակյանի, 26-րդ ենթակետով Պարույր Միհրանի Հակոբյանի, 27-րդ ենթակետով Սոս Գևորգի Ղահրամանյանի, 31-րդ ենթակետով Ալեքս Մարտինի Ալեքսանյանի, 33-րդ ենթակետով Սերգեյ Ռուսլանի Գրիգորյանի, 35-րդ ենթակետով Հովհաննես Արթուրի Մուսայելյանի, 44-րդ ենթակետով Հայկ Արսենի Աբրահամյանի, 45-րդ ենթակետով Դավիթ Կարենի Թամազյանի, 46-րդ ենթակետով Լևոն Սերգեյի Բարխուդարյանի, 48-րդ ենթակետով Հայկ Հովհաննեսի Ստամբոլցյանի, 49-րդ ենթակետով Գարիկ Երվանդի Հովհաննիսյանի, 50-րդ ենթակետով Միքայել Տիգրանի Գալստյանի, 53-րդ ենթակետով Դավիթ Գևորգի Գևորգյանի, 54-րդ ենթակետով Տիգրան Վահագնի Մխիթարյանի, 55-րդ ենթա-կետով Ռոբերտ Ռաֆայելի Աթաբեկյանի, 56-րդ ենթակետով Մարտին Սուրենի Խաչատրյանի, 61-րդ ենթակետով Գևորգ Շավարշի Գևորգյանի, 65-րդ ենթակետով Նարեկ Վարդանի Գրիգորյանի, 66-րդ ենթակետով Վահե Արթուրի Մկրտչյանի, 68-րդ ենթակետով Արամ Արմենի Հովհաննիսյանի, 70-րդ ենթակետով Փայլակ Դերենիկի Ուռուսյանի, 74-րդ ենթակետով Ռազմիկ Վիլհելմի Հովհաննիսյանի, 80-րդ

ենթակետով Սամվել Ալիկի Առաքելյանի, 81-րդ ենթակետով Վահագն Արմանի Ալոյանի, 82-րդ ենթակետով Ռոբերտ Տիգրանի Գրիգորյանի, 84-րդ ենթակետով Սամվել Գուրգենի Մարտիրոսյանի, 89-րդ ենթակետով Լևոն Մկրտիչի Մալխասյանի, 92-րդ ենթակետով Գոռ Գևորգի Մանուկյանի, 95-րդ ենթակետով Տիգրան Արթուրի Ալեքսանյանի, 96-րդ ենթակետով Արմեն Խաչիկի Թևանյանի, 99-րդ ենթակետով Հայկ Էդուարդի Ստամբոլյանի, 101-րդ ենթակետով Տիգրան Միքայելի Գյուրջյանի, 103-րդ ենթակետով Արման Խաչատուրի Ջանազյանի, 104-րդ ենթակետով Հայկ Աշոտի Քարտաշյանի, 105-րդ ենթակետով Միհեր Վաչեի Քալաշյանի, 106-րդ ենթակետով Արեն Ղևոնդի Աբրահամյանի, 107-րդ ենթակետով Մանվել Հովհաննեսի Հովհաննիսյանի, 108-րդ ենթակետով Գոռ Վահագնի Խաչատրյանի, 109-րդ ենթակետով Սամվել Արմանի Զոբանյանի, 116-րդ ենթակետով Դավիթ Արայի Մկրտչյանի, 5-րդ կետի 3-րդ ենթակետով Միքայել Վահեի Ղազարյանի, 6-րդ կետի 5-րդ ենթակետով Աշոտ Կարենի Սիմոնյանի և 6-րդ ենթակետով Դավիթ Տիգրանի Բաղդասարյանի մասով սույն որոշումն ուժի մեջ է մտնում նրանց 18 տարին լրանալուց հետո:

5. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածի 1-ին կետով Միքայել Գևորգի Վարդանյանի, 2-րդ կետի 4-րդ ենթակետով Արմեն Արմենի Սարոյանի, 3-րդ կետի 10-րդ ենթակետով Վահագն Արմենի Այվազյանի, 4-րդ կետի 20-րդ ենթակետով Հայկ Մովսեսի Շահմուրադյանի, 22-րդ ենթակետով Գևորգ Վահրամի Ասատրյանի, 62-րդ ենթակետով Տիգրան Արմենի Եգանյանի, 63-րդ ենթակետով Արթուր Սլավիկի Ավետիսյանի, 98-րդ ենթակետով Լեոն Մանվելի Խաչատրյանի մասով սույն որոշումն ուժի մեջ է մտնում նրանց այլ հիմքով ստացած տարկետումը դադարելու օրվանից:

6. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո դադարեցված է համարվում N 2 հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով Ռուբեն Բագրատի Հարությունյանին, 2-րդ կետի 2-րդ ենթակետով Էդուարդ Դավիթի Ավետիսյանին, 3-րդ ենթակետով Հայկ Հովհաննեսի Ավետիսյանին, 4-րդ ենթակետով Սահակ Ահարոնի Լևոնյանին, 6-րդ ենթակետով Ջեյմս Արթուրի Սարգսյանին, 8-րդ ենթակետով Ռազմիկ Արմենի Հարությունյանին, 9-րդ ենթակետով Դավիթ Թաթուլի

Մարգարյանին, 11-րդ ենթակետով Էրիկ Անդրանիկի Մելիքյանին, 12-րդ ենթակետով Ջորդի Ահարոնի Մուրադյանին, 13-րդ ենթակետով Շահեն Արթուրի Քասինյանին, 14-րդ ենթակետով Նարեկ Վլադիմիրի Կարապետյանին, 15-րդ ենթակետով Թադե Արմոնդի Հաղվերդյանին, 16-րդ ենթակետով Տիգրան Միհրի Ավետիսյանին, 3-րդ կետի 3-րդ ենթակետով Հայկ Արմենի Բալասանյանին, N 3 հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով Միքայել Տիգրանի Սեյրանյանին, 6-րդ ենթակետով Դավիթ Սամվելի Զոհրաբյանին և 8-րդ ենթակետով Հայկ Արմենի Մելքումյանին նախկինում տրված տարկետումները, և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 1-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2021 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» N 1069-Ա որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի 2-րդ և 3-րդ ու 5-րդ կետի 2-րդ ենթակետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» N 1111-Ա որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի 7-րդ, 11-րդ, 17-րդ, 18-րդ, 22-րդ, 30-րդ, 33-րդ և 39-րդ ենթակետերը, 3-րդ կետի 27-րդ, 36-րդ և 45-րդ ենթակետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 18-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ձմեռային զորակոչից տարկետում տալու մասին» N 78-Ա որոշման N 2 հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2024 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին և կառավարության մի շարք որոշումներում փոփոխություն կատարելու մասին» N 1055-Ա որոշման N 2 հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 23-ի «Կրթության

և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2024 թվականի ձմեռային զորակոչից տարկետում տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 27-ի N 99-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 75-Ա որոշման N 2 հավելվածի 1-ին կետը:

7. Սահմանել, որ սույն որոշման NN 1, 2 և 3 հավելվածներում նշված քաղաքացիների համար սույն որոշմամբ տրված տարկետումներն ուժի մեջ են մտնում մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ իրենց զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատներ ներկայացված՝ համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության ընդունվելու (հրամանագրվելու) վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքի հիման վրա (իսկ ընդունելության ավելի ուշ ժամկետների դեպքում՝ տվյալ բուհից տեղեկանք ընդունվելու ժամկետների մասին): Եթե մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ սույն որոշման NN 1, 2 և 3 հավելվածներում նշված քաղաքացիներն իրենց զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատներ չեն ներկայացնում համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության ընդունվելու (հրամանագրվելու, կամ ընդունելությունը ավելի ուշ լինելու) վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանք, ապա նրանք համարվում են սույն որոշման շրջանակներում տարկետման իրավունք չունեցող և ենթակա են պարտադիր զինվորական ծառայության՝ հայտարարված 2025 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

18.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ